



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՍԻ ԿՈՆՏԱԿՏԱՆ
ՊԵՏԵՐ ԲՈՒՂՆԻՍԻ ԱՍԻ
ԽՐԵԱԳՐ. ԱՐՇԱԼՈՅՍ ԵՐԱԳՐԻ
ԳԱՆՏՐԷ (ՀԱՅ ԳՎԱԳԻՒԷ)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBIANIEM LE CAIRE (ÉGYPTÉ)

ԱՐՇԱԼՈՅՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՊԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան, ողջ դանկին 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿՈՎՆԵՐ

Տարեկան Ֆրանկ 20

Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԿ Է

ԵՒ ԹՂՈՍԱՍԻ ՅԱԽՔԸ

ԽՐԵԱԳՐՈՒՔԻԱՆ ԱՐԱՅ :

ԽՐԵԱԳՐՈՒՔԻԱՆ ՈՂՂՈՒԱԾ
ԳՐՈՒՔԻՆԵՐ ԵՍ չ'ԵՆ ՏՐՈՒՔ :

Գաղտնի վարժարանի Հոգաբարձու-
թեան միակ անդամէն ստացուած պաշտօ-
նագիրն մամուլի տակ դրուելէն անմիջա-
պէս վերջ, ստացանք հետեւեալ նամակն ալ,
որը նոյնպէս կը հրատարակենք, վերապա-
հելով մեր գիտողութիւններն:

Համար 30 Գահիրէ 17/29 Օգոս. 1899

Ազնիւ

Պ. Եղիշէ Թորոսեան

Ի Գահիրէ

Հոգաբարձութիւնս Ազգ. Գաւառ. վար-
չութեան Պատ. Գաղաք. Ժողովոյ կողմէ
ստացած է 14/26 Օգոստոս 99 թուականաւ
եւ 803 համարաւ մի պաշտօնագիր(*) որով
յեղեցինք վերջ թէ, դուք իբր գաղաքա-
ներ պաշտօնին մէջ իսկ ունեցած թերու-
թեանց պատճառաւ յաճախ գանդատներու
տեղի տուած էք, կը նկատէ որ ձեր հիմ-
նած թերթին մէջ բուն լեզու մը կը դոր-
ծածուի ի մասին Կ. Պոլսոյ Ամեն. Ս. Պատ-
րիարքին, որոյ ստորակարգեալներէն մին
էք ձեր պաշտօնի բնութեամբ. Ժողովը նը-
կատելով որ ձեր այս վերջին ընթացք գը-
լիովին հակառակ է եկեղեցական նուիրա-
պետական կարգաց և կանոնաց, ոչ պատ-
շաճ և ոչ օրինական կը գտնէ այլ եւս ձեր
պաշտօնին շարունակութիւնը Ս. Աստուա-
ծածին եկեղեցւոյ մէջ:

Հետեւապէս Հոգաբարձութիւնս այսու

(*) Կը նկատենք թէ Ազգ. Առաջնորդարանէն
մեզ ուղղուած պաշտօնական նամակները նպա-
տակաւոր պարունակութիւն մը ունեցած են միշտ:
Ներկայ նամակը եւ նախորդ թուով մեր
հրատարակած Հոգաբարձութեան նամակը բոլոր-
ովն տարրեր իմաստ ունին:

Գաղաքական Ժողովոյ 803 թիւ նամակը,
անտեղի եւ բոլորովին ձրի ամբաստանութեան
տակ ձգել կ'ուզէ պաշտօնեայ մը՝ որ մտաւորա-
պէս ու թր տարիներ անընդհատ Գաղտնի վար-
ժարանի մէջ պաշտօն վարած է խղճի մտօք՝ եւ
այդ 8 տարիներու ժամանակամիջոցին մէջ պաշ-
տօնավարող ազգային վարչութեան բոլոր ան-
դամներուն եւ թաղական աղաներուն գոհունա-
կութեան արժանացած է եւ առ այս գրաւոր շատ
մը ապացոյցներ ունի:

Գաղաք. Ժողով եւ հոգաբարձութիւն եթէ կը
հաճին անդամ մ'ալ թող կարգան 16)28 Յունիս
99 թուականաւ իրենց ուղղուած նամակը եւ
սեանին թէ ինչէր պարզուած կան հոն, որոնք
զուտ ճշմարտութիւններ են:

Կ'աղբարարէ ձեզ թէ յառաջիկայ սեպտե-
ամնոյ (Ն.Տ.) 1էն սկսեալ դադարած է ձեր
գաղաքապետութեան պաշտօնը:

Մնամք յարգանքօք

Ի գիմայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ

Հոգաբարձութեան(**)

Կ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍ ՄԸ՝

ՊԵՏՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ

1891 տարւոյ դեկտեմբեր ամսուն մէջ Կ. Պոլ-
սոյ Աջրեան Պատրիարքը կոնդակ մը հանած էր,
որով թուելով օսմանեան «բարեխնամ» կառավա-
րութեանէն մեր ազգին վայելած «անհուն բարիք-
ները», կը խրատէր հայ Ժողովուրդը «առաքելա-
կան պատուէրին համաձայն» միշտ հաւատարիմ
մնալ Սուլթաններու «փառապանծ» գահուն եւ
զգուշանալ ինքնապաշտպանութեան «փասակար»
գաղափարը ասրածոյներուն «խոտվարական
ստորանքներէն», ու մինչեւ իսկ հայրաքար պատ-
ուէր կուտար ամէնուն, որ երբ ո եւ է տեղ մը
«խոտվարար»ներու հանդիպին, անմիջապէս դա-
նոնք բռնեն ու կառավարութեան յանձնեն . . . :

Ինչպէս կ'երևի, դեռ այն ժամանակները Հա-
յոց մէջ շատ չ'կային Գահիրէի Գաղաքական Ժո-
ղովի Վսեմաշուք անդամներուն պէս մեծահանճար
և ազգասեր Էֆէնտիներ. այդ պակասը լրացնե-
լու համար էր որ Պատրիարքը կ'ստիպուէր այդ-
պիսի կոնդակ մը հանելու:

Այդ պատրիարքական հրաշալի կոնդակը, ինչ-
պէս ամէն տեղ, Մուշ ալ պիտի կարգացուէր մայր
եկեղեցիին մէջ: Բայց չգիտեմ ինչպէս օր առաջ
Ժողովուրդը կոնդակին պարունակութիւնը իմա-
ցած էր:

Կիրակի էր. խուսն բազմութիւն կար եկեղե-
ցիին մէջ. կատարեալ լռութիւն եւ հանդարտու-
թիւն կը տիրէր ամբոխին բոլոր շարքերուն մէջ.
ամէն ոք երկիւղածութեամբ կ'ունկնդրէր ժամա-
սացութիւններուն: Սակայն երբ քահանան բեմը

(**) Երեք տարին կը մօտենայ որ Ազգ. Առաջ-
նորդարանը եկեղեցւոյ հոգաբարձութեան համար
3—4 անգամ ընտրութիւններ կատարեց, սակայն
ոչ ոք ընտրուիլ հաճեցաւ առաջարկուած պաշտօ-
նը, ընտրութեանց եղանակը հակաառնամադրա-
կան եւ թաղականի կամ հոգաբարձուի, որը կ'ու-
զես ըսէ, իրաւասութիւնները բացարձակապէս
սեղմուած ըլլալուն համար:

Ի՞նչ ընէր Առաջնորդարանը:

Այս անգամ մտածեց երեք հատ (թաղական-
ներուն թիւը երեք պէտք է ըլլայ) համակերպիլ
գիտցող անդամներ գտնել՝ եւ անոնցմէ ալ հազիւ
հազ միմիայն կրկու հատ գտաւ: Առոնք ինչպէս
յայտնի է ստորագրութեանց տեղէն, ո՛չ ատենա-
պետի եւ ո՛չ ատենադպրի գրութիւնը ընդունած
են. (եզրկատական հնութիւն կամ նորութիւն մ'ալ
այս է) հապա ինչ որ գիտեն, սա է թէ, պատ-
րաստ գրուած և իրենց ներկայացուցուած թուղ-
թի մը տակ ստորագրել անհրաժեշտ է:

կըսէ պատրիարքական կոնդակը կարգաւոր, զէպ
ի դուռը հոսանք մ'էր սկսաւ, ամբոխի արագ տո-
ղանցութիւն մը՝ որ իր լռութեամբ աւելի սար-
ստեցուցիչ էր . . . ու մէկ քանի վայրկեան ետք՝
արդէն եկեղեցին բոլորովին պարպուած էր:

Կը հաւաստեն թէ տէրտէրը կարգացիր է կոն-
դակը ի լուր եկեղեցիին չորս պատերուն
Կէս ժամ վերջը եկեղեցին նորէն կը լեցուէր
նոյն բարեպաշտ հաւատացեալներու խուսնեքամ
բազմութեամբ:

Օրը անցաւ ատանց միջադէպի.—թէ՛ քահա-
նան թէ՛ Ժողովուրդը իրենց դերը յաջողութեամբ
կատարած էին:

Հա՛, քիչ մնաց, պիտի մտնայի ըսել թէ ո՛ւր
կը գտնուի այդ Մուշ քաղաքը. Եգիպտոսի, Պուլ-
կարիոյ կամ Ամերիկայի քաղաք մը չէ՛ ան, այլ
Օսմանեան տիրապետութեան տակ ճնշուած Հա-
յաստան անուն կրկրին քաղաքներէն մէկն է:

Ականջ հնչցողը քո՛ղ լսէ:

Մ. ՏԱՐՈՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բէնի պատերազմական տոնանին առ-
ջև տեղի ունեցող դատավարութիւնը նախ-
կին սպայակոյտի պետերուն աննպատաշա-
ւալի երևոյթ մը կ'առնէ հետզհետէ: Տրէյ-
ֆիւսի դէմ եղած ամբաստանութիւնները
կը ցնդին իբր կեղծ և անհիմն: Դերերը
այժմ՝ փոխուած են. այսօր՝ ամբաստանեալը
1894ին դատապարտեալը չէ, այլ այն ա-
տենուան սպայակոյտը:

Տրէյֆիւսի անվեհեր պաշտպանն ու
Հատագովը՝ Պ. Լապօտի, որ այն ինչ ապա-
քինած է ոճրագործի մը մահացու գնդա-
կին հարուածէն, նիստերուն ներկայ կը
գտնուի ահա և վայրկեան մը դուլ ու դա-
դար չի տար զօրավար Մէրսիյէի, Կոնյի և
գնդապետ Մօրէլի, որ 1894ի պատերազմա-
կան տոնանին կը նախագահէր: Իւր ճար-
պիկ հարցումներով, հնարամիտ դարձուած-
ներովը կը շփոթէ, կը նեղէ զիրենք և յա-
ճախ անոնց բերնէն կը խլէ ակամայ խոս-
տովանութիւններ, յայտնութիւններ, որոնք
կարող ու վարպետ փաստաբանի մը ձեռ-
քին մէջ զօրաւոր զէնքեր կրնան ըլլալ ճըշ-
մարտութիւնը ապացուցանելու համար:

Նախկին պատերազմական հախարար՝
զօրավար Մէրսիյէի կացութիւնը մանաւանդ
հետզհետէ կը ծանրանայ:

Տրէյֆիւսի յանցապարտութեանը մա-
սին իբր ջախջախիչ փաստ պատերազմական
ատենանի ցոյց տուած երկու գաղտնի նա-

մակերևութիւնը գէտ, իսկ իր հերքում արուեստը երկու օտար կառավարութեանց (Աւստրիա և Իտալիա) գինւորական կցորդներուն կողմէն, որոնք զատ զատ պաշտօնապէս յայտարարեցին թէ իրենց վերագրուած այդ նամակները ընտիրենցը չեն, այլ կեզծ ու շինծու են:

Այս վերջին օրերս փարիզի մէջ տեղի ունեցած խռովայնոյ գէտքերը Վալտէր-Ռուսօի գահիճին գիրքը խախտած են: Սոյն նախարարութիւնը որ ի սկզբան անյուսալի կարող և գործունէութիւն ցոյց տուաւ և անաչառ կերպով գիտցաւ երկրին օրէնքը յարգել տալ ամենուն, այժմ կը մեղադրուի որ թոյլ և վարանտ ընթացք մը բռնած է ընդդէմ ամբողջ խռովարարներու, որոնք կառավարութեան դէմ ըմբոստանալով քանի օրէ ի վեր քաջուած են շէնքի մը մէջ և կը մերժեն անձնատուր ըլլալ մինչև որ իրենց բոլոր առաջարկները ընդունուին:

Ասիկայ խռովութեան կրակը վառ պահել է: Եւ արդարև նապրօլ փողոցին շուրջը, ուր տեղ ամբողջ մէջ փակուած կը գտնուի հակահրէականներու պետ փիւղ հրէն իւր մի քանի մարդոցմով խռովութիւններ, անկարգութիւններ անպակաս են: Եւ ստէպ ընդհարումներ տեղի կ'ունենան ստտիկան զօրաց և խել մը խռովարարներու միջև:

Օրուան նախարարութիւնը նախ ուզեց գինու զօրութեամբ այդ խռովայնոյնքը զսպել: Ապա այդ գաղափարէն ետ կեցաւ յայտարարելով թէ չէր արժեք քանի մը գինուորի կեանքը վտանգի ենթարկել զանոնք ձեռք ձգելու համար: Ուստի պաշարման տակ առաւ ապստամբներուն ընակարանը և անոնց հետ արտաքին յարաբերութիւնը կտրեց:

Վերջին պահուն հասած լուրերէն կը տեղեկանանք թէ կառավարութիւնը ապրտամբներուն պատասխարուած տան շուրի ճամբան կտրած է:

Իրաց այս խռովայնոյ վիճակը Գաղղիոյ անխիղանութեան օրերը կը յիշեցնեն մարդուս:

Մինչ այս գէտքերը տեղի կ'ունենան ի Ֆրանսոս, անդին Բրէթօրիտի և Լճնորաի միջև ալ տխուր տեսարան մը պարզուելու երկիւղը օրէ օր իրականութիւն կ'ստանայ: Թրանսվալի խաղաղիկ և աշխատասէր ժողովուրդը մեծ ճգնաժամի մէջ կը գլուխուի այս միջոցին: Մօտալուտ պատերազմը անխուսափելի կը թուի: Պատերազմ մը, յարում փոքրիկ ժողովուրդ մը վերջ ի վերջոյ պիտի ընկնի բիրտ ուժին առջև:

Թէև Պապա Գրիգորէս —ինչպէս սովոր են կոչել Պօօրներուն փոքրիկ հանրապետութեան այդ բանիմաց նախագահը— հաշտարար ոգի մը ցոյց կուտայ և Թրանսվալի մէջ գտնուող անգղիացիներուն ընտրական իրաւունքի և քաղաքացիութեան մասին պահանջուած առաւելութիւնները տալու և աւելի զիջողութիւն ընելու տրամա-

զիր կ'ընեն, սակայն չյոտացուիր որ խընդիրը խաղաղութեամբ կարգադրուի: Վանդի Թրանսվալի նախագահը ո'րքան յօժարամիտ և խելաւոր գտնուի, խրոխտն Ալպիան ա'յնքան բազմապահանջ կ'ըլլայ:

Այժմ սկիները կը տեսնուի թէ Մ. Չէմպրլէյի հաստատ որոշումն ու նպատակն է Թրանսվալի կցել Մեծն Բրիտանիոյ գաղթային երկիրներուն:

Գրիգորէս նախագահին վերջնական պատասխանը այժմ հասած է Լճնորա: Կը մնայ տեսնել թէ Մ. Չէմպրլէյն ինչ կերպ ընդունելութիւն պիտի ընէ:

ԳԻՏԱԿ

Յ. Գ.—Արշալոյսի Դշ, օրուան թուոյն մէջ հրատարակուած յաւետ յիշատակելի հրատարակումէ, Տնօրէն-Խմբագրից Ազգ. վարժարանի պաշտօնէն գաղարման համար Հոգարարձութիւնը խել մը քանակաւ պատճառներու մէջ «Իրտակ» ծածկանունան տակ նախորդ յօդուածս ալ կը յիշէր:

Ուշի ուշով աչքէ անցուցի այդ յօդուածը, որ քաղաքական համառօտ տեսութիւն մ'էր Պ. Տէլքասէի ճամբորդութեան և Տրէյֆիտի խնդրոյն վրայ և բնաւ նախաինք մը, թշնամական ակնարկութիւն մը չկար նորիկ Ալեկսանդրապոլսեան Օրմանեանի գէտ:

Հոգարարձութիւնէն, ինչպէս նաև իւր քարտուղար թարգմանը ամէն կարգաշարին թէ որ այդպէս կ'ըմբռնեն ու կը դատեն, շիտակը իրենց հասկացողութեան վրայ շատ աննպաստ գաղափար մը կուտան: Տեղը չէ՞ ըսել tel maître, tel valet.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ տեղւոյս Ազգ. վարժարանի չափահաս աշակերտներէն շատերը յիշեալ վարժարանին մէջ բան մը սորվելէ 'ի սպառ յոյսերնին կտրած՝ լաւագոյն համարած են մէյմէկ արհեստաւորի քով աշակերտութեան մտնել, ոմանք ալ օտար վարժարան երթալու մտադիր են:

Ահա ձախող ու անհոգ ընթացքի մը ցաւալի վախճանը . . .

Տղայոց այս որոշումը ինչ ծանր ու սրտաուռ բողբ մ'է լուրեայն՝ ընդդէմ կրթական հսկող մարմնոյն: Վարձքերնին կատար ուրեմն:

Նիւ-Եորք հրատարակուող Հայրենիք շաբաթաթերթին մէջ կը կարդանք թէ Ամբրիկայի Ուսար քաղաքին Ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ Պոսթօնի հովիւ Տ. Մաշթոյ վարդապետ պատարագած է վարդապետի տանին առթիւ և ազգադա Պատրիարքի առունը չէ յիշատակած:

Օրմանեանի ձեռնառն վարդապետին այս գովելի ժողովրդասիրութիւնէն այնչափ արտոժամ է տեղւոյն հայ հասարակութիւնը, որ եկեղեցւոյ մէջ հաւաքուած խուռն բազմութենէն ոչ ոք հակառակ դիտողութիւն մը ըրած է վարդապետի ընթացքին դէմ:

ՔԱՀԱՆԱՅՈՒՄԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵՆԷ ԶՈՒՐԿ ՏՈՒՆ ՄԸ

Գաղթական եւ Երեք տարեկան ի վեր ընտանեօր հաստատուած եւ հոս Կիրակի և տօնօրեր ազգականաց և բարեկամաց փոխադարձ այցելութիւնները զիս բաւական կը մխիթարեն և առժամանակայ կերպով կը մոռցնեն թէ պանդուխտ մ'եմ: Բան մը սակայն ինձ զարմանք կը պատճառէ և կը յիշեցնէ թէ իրօք պանդուխտ եմ Պօլիս կամ այլուր աւանդական սովորութեան համաձայն վարժուած էի գոնէ տարեկան քանի մ'անգամ անօրհնէքի եւ լի համար քահանայի երես տեսնել: Երեք տարիէ ի վեր մեր տունը քահանայ մը սոք կոխած չէ. մեր տան այս գրկանքը առիթ տուած է կրօնական ձեռակերպութեանց չի մասնակցելու: Արդ փախաք է գիտնալ թէ այդ զըրկանքը միայն մեր տան համար վերապահուած է թէ մեր գաղթական եղբայրներէն շատերուն համար ալ:

Սմբագիր Տէր, խնդրեմ, երկուորս հաճիք ձեր պատ թերթին մէկ անկիւնը զետեղել և քանի մը տողով բացատրել թէ մեր Տէր Պապաներուն այցելութիւնը վայելելու համար ինչ պակասութիւն ըրած ենք արդեօք և յետ այսմ ինչ պէտք է ընենք, որ իրենց պաշտօնի գիտակցութիւնը իրենց յիշեցուցած ըլլանք:

Պ. ԵՐՈՒԱՆԻ

Մ. Ս.—Սա ծանօթ հանրագրութիւնը զուք ալ ստորագրած էք: Եկեղեցի գնացած և զձեզ ազգայնաց ցանկին մայր տուամբը արձանագրել տուած էք: Քահանաներէն ծուխ ճանչցուելու համար սովորական դարձած յիշէք տուած էք: Քահանաներուն վրայ սա ժողովրդին «յիշել չիշու» խնդիր մեծ ազդեցութիւն ըրած է: Թերևս զուք ալ անոր զոհերէն եղած ըլլաք: Շուտով այդ առթիւ պիտի գրենք արդէն:

Ա Ձ Դ

Աղքատախնամ ընկերութեանս Ընդհ. ժողովը իւր Բ. նիստը պիտի գումարէ յառաջիկայ կիրակիէ 3 սեպտ. ժամը 21/2ին այլկանց վարժարանի սրահին մէջ, (Եկեղեցւոյ շրջափակը), և ներկայ գտնուողներու թիւը մեծամասնութիւն համարելով՝ պիտի զբաղի հետեւեալ օրակարգով:

1. Քննութիւն և վաւերացումն տարեկան հաշուեցուցակի.
 2. Ընտրութիւն Գործադիր ժողովոյ.
 3. Ընտրութիւն Ընդհ. ժողովոյ գիւանի.
 4. Ընտրութիւն պակասեալ հիմնադր անդամոց.
- Ուստի կը խնդրուի ամեն բաժանորդ եղող ընկերներէն, որ բարեհաճին ներկայ գտնուել և կատարել իրենց այդատիրական պարտաւորութիւնը:
- Ի դիմաց Ընդհ. ժողովոյ Աղքատ. Ընդհ. Գահիրէի Հայոց
- Ասեմագլխի Վ. Ասեմագլխի
Գ. Պ. ՍԱՐԲԱՅԵԱՆ ՏՐ. Կ. ՃԵՐԱԶԵԱՆ

ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԱՐԳԻ ԿԵԱՆՔԷ
120 երեսներէ բաղկացած այս գրքոյկը կը պարունակէ Պերճի (Մ. Տամասեան) հայրենասիրական ոտանաւորները:
Գինն է 5 դրուս ողջ
Կը գտնուի խմբագրութեանս քով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈՒՐԳԵՐ ԵՐԹԵԻԿԻՈՂ ԹՐԱՄՎԱՅՆԵՐԸ
Գահիրէի երեքտարական թրամվայի ընկերութիւնը անակնկալ պատճառներով հարկադրուած է քանի մ'օրուան համար ևս յետաձգել Բուրգերու նոր գծին երթիւնը:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ր

... Խմբագիր,

Աղքատախնամ Ընկերութեան Ընդհ. Ժողովի անցեալ կիրակէ հրահրուած էր ի նիստ եւ զըտ- բաղդաբար թէ հիմնագիր եւ թէ բաժանորդ ան- դամներէն հաղիւ տասն եւ չորս անձ ներկայ էին: Արդարեւ խիստ ցաւալի իրողութիւն մ'է այս: Չենք ուզեր գրիւ Աղքատախնամի նման կա- ռուոր մարմնոյ մը օգտակարութեան վրայ, որը ամեն զգայուն մարդու ծանօթ է. եւ մասնաւոր՝ Արեւալոյս սուղ էջերը կրկնութիւններով լեցնել ցանկացողներէն չենք, միայն թէ կը փափաքինք որ այս խնդիրը ընդհանուրի ուշադրութեան ներ- կայացնելով Աղքատախնամը իրեն պատշաճ բարձ- րութեանը հասցնենք: Ինչպէս որ ամէն երկիր իր աղքատը կ'ունենայ (զժբաղդաբար վերջերս միշտ ստուար թիւով) պարտի ունենալ իր Աղքատա- խնամ Ընկերութիւնն ալ, ինչպէս որ մենք Գա- հիրէցիքս ունեցանք մերը, թէպէտեւ ուշ, բայց վերջապէս ունեցանք: Ըստ է անագան՝ քան եր- բէք:

Ուրեմն ինչ պատճառ կայ որ հայ ժողովրդը- եան կողմէ այսչափ ցաւալի անտարբերութիւն մը կը տեսնուի դէպ ի Աղքատախնամը:

Պատճառը երկու կողմէն կրնայ ըլլալ, կամ ժողովուրդէն եւ կամ ընկերութեան վարիչներէն: Արդ քննենք հասկնալու համար թէ պատճառը ո՞ր կողմին պէտք է վերագրել:

Պատուարժան վարիչք քննադատելով ժողո- վրդեան ստան անտարբերութիւնը, կ'ամբաստա- նեն թէ՛ ժողովուրդը իր հեռակայութիւնով զօ- րավիզ չըլլալէ զատ, իր ցոյց տուած հակակրօ- թեամբ ալ, գուցէ պատճառ դառնայ այդ կազ- մակերպութեան հետզհետէ քայքայման:

Այո՛, օգտակար կազմակերպութիւն մը պէտք է համարել, ցորչափ իր նպատակն է կարօտ աղ- քատը մխիթարել, հէգ հիւանդը դարմանել, թըշ- ուտութեան անողոք ճանկը ինկած մահու պայ- քարը մղող, եւ համեստութեան նախանձախնդիր ընտանեաց պաշտպան եւ խնամակալ հանգիստ- նալ: Կա՞յ արդեօք ասկէ աւելի նուիրական գործ մը, վե՛հ ձեռնարկ մը, որ հաւասարի աղքատին, որբին, անկախին պաշտպանութեան. չէ՞ մի որ Գրիստոս ինքն իսկ կ'ըսէ «Որ ոլորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ»:

Բայց աւելի լաւ կ'ընեն արդի Պարոն վարիչ- ներն, եթէ ներկի է բոլը, որ տեսնէին իրենց աչքին մէջ գտնուած գերանները, փոխանակ ժո- ղովրդին աչքի շեղը թմբակահար յայտարարելու: Ինչո՞ւ չի քաջալերեր ժողովուրդը, ինչո՞ւ հա- կակիր է Աղքատախնամին: Պատճառը իրենց մա- սին եղած տարածայնութիւնն է թէ՛ Աղքատա- խնամի տեղ, պէտք է ըսել Պէն-էլ-Սուրէնեան խրմ- բակ վանքի զի այդ պարտաւոր՝ փոխանակ ընդ- հանրութեան օգտակար ըլլալ ջանալու, իրենց անձնական կրից յագուրդ տալու անազնութիւնը կ'ունենան. եւ մասնաւոր որ՝ աղքատին օգնելէն աւելի իրենց համար անձնական գործ մը ըրած կը շահագործեն:

Արդ՝ եթէ այդ տարածայնութիւն որ ընդ- հանրացած է եւ որը շեշտուեցաւ անցեալ կիրակի Ընդհ. Ժողովի մէջ, ձրի զրպարտութիւն մ'է, եւ եթէ արդարեւ մասնաւորաց շահերուն չ'ճառայէր Աղքատախնամը, ինչ որ կ'ուզենք հաւատալ, այդ պարագային պէտք է որ ամբողջութեամբ հրա- ժարի ներկայ վարչութիւնը, պայմանաւ որ եր- բէք վերջնորելի չըլլայ: Ըլլայ Մայր Դիւան, Ը- լայ Գործ. Ժողով, Ըլլայ բժիշկ, Ըլլայ դեղագործ, Ըլլայ մատակարար, Ըլլայ հաւաքիչ. վերջապէս ամէն անոնք՝ որ գործ մը ունին ընկերութեան մէջ դրամականին վերաբերեալ:

Քանի որ հրապարակի վրայ կայ անվտա- հութիւն արտայայտող կտակածներ եւ բարձա- սանքներ, նոյն իսկ ցաւալի իրողութիւնն այդ պէտք է համարել ընկերութեան յետադիմութեա- նը: Հետեւաբար կը խնդրուի արդի վարիչներէն յանուն բազմաթիւ կարօտ, աղքատ, թշուտ հի- ւանդներու, որ հաճին մի քիչ հանգիստ առնել, թողլով իրենց աթոռներն ուրիշ արժանաւորներու եւ մասնաւոր ժողովուրդը հեգնելու ատեն մտա- բերին հետեւեալ առածը.

Կօչիկէզ վեր մի ելլեր: 27 Օգոստոս 99 Գահիրէ

ՀՐ—ԱԶ

Կ Ի Ն Ե Ր Ը

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ա Ր Ա Ր

Աշխարհի վրայ եթէ անլուծելի հանե- լուկ մը կայ, իգական սեռն է այն:

Խորհրդաւոր է կանանց անմարուս ըլ- լալը, որովհետեւ եթէ մօլուսաւոր ըլլային, ամբողջութեամբ ատեն չ'պիտի կարենային զրա- պել իրենց շաղակրատութիւնը եւ անուշա- գիւր սափրիչը ծնօտնին պիտի կտրէր:

Կատուն փայփայուելու ատեն կը ճան- կըրտէ:

Կանայք երբ զգան իրենց սիրուիլը, թաղանթիլի փափաքներ կը յայտնեն:

Երբ որ ե է լուր, որ ե իցէ զրոյց տա- րածել կուզես, կնոջ մը յայտնէ փտահ ըլ- լալով որ ուշադրութեամբ մտիկ կ'ընէ եւ առանց բառ մը մոռնալու կը հաղորդէ ու- ըրչներու, ահագին յաւելածներով, այն- պէս որ մինչև իսկ տարիներէ ետքը զայն կը լսես բոլորովին օտար ու հեռաւոր մար- դոց բերնէն:

Շատ պատշաճ է կրկնել ծագիկներու նմանցնել. որովհետեւ ինչպէս ծագիկանց տե- սակը, նոյնպէս կանանց բնաւորութիւններն անթիւ են:

Կոյրի մը ըսեր են թէ, «տեսնե՞ս... կինը ճիշդ վարդի կը նմանի»: Այո՛, պա- տասխանած է իսկոյն, «դիտե՛մ. փուշերէն կը հասկնամ»:

Կինէ մը եթէ վրէժ լուծել կ'ուզես, թող իր վիճակին մէջ որ ուզածը ընէ. ի վերջոյ անպատճառ պիտի զղջայ:

Երկու կանանց բարեկամութիւնը կը նմանի, մէկ թաղի մէջ դէմ առ դէմ գըտ- նուող նպարավաճառներու բարեկամու- թեան:

Կանայք թռչուններու կը նմանին, զա- նոնք չ'փախցունելու համար, պէտք է վան- դակի մէջ պահել:

Այս ամէնը գիտնալով հանգերձ ո՞վ չ'սիրեր կրկնելը: Ս. Գ.

Արեւալոյս թերթի Աղքատախնամի գործակա- լութիւնը, ներկայ ամսոյ սկիզբէն ստանձնած է Տիար Յակոբ Փափագեան եւ իւր հասցէն է A. PAPA ZIAN Chez K. Ipekian Alexandrie

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ՓԱՐԻԶ, Կ. Բ.—Ձեր գրածները կարգացինք: Շնորհակալութիւն Հաճութեամբ կ'ընդունինք:

Գ.Ա.ԶԻՐԷ, Ա.—Կը ցաւիք եղեր թէ մեր թեր- թը ձեռի զրկած չ'ենք: Շիտակ չէ: Ձեր հասցէին զրկուած առաջին թիւը, փոսթի միջոցաւ մեզ վե- րագրած է եւ այսօր իսկ մերժուած քանի մը թերթերուն մէջ կը գտնուի: Եթէ կ'ուզէք, հա- ճեցէք սպարան գալ ու տեսնել:

Ա.Ղ.Բ.Ս.Ա.Ն.Դ.Ի.Ա., Ա. Շ.—Ձեր զրկածներն ըս- տացանք: Նամակին մէջ լաւ բացատրուած չէր ձեր նպատակը: Կարելի չէ՞ որ մի ուրիշ նամա- կու աւելի լուսաբանէք զմեզ, որպէս զի ի վեր- ջոյ մեր կարծիքը սրտապէս յայտնենք: Քանի մը օր միայն կ'սպասենք:

ԻՊՐԱՀԻՄԻՅԷ-ՇԱՐԳԻՅԷ, Տիար Գ. Բ. եւ Յ. Գ.—Շնորհակալեօք ստացանք ձեր զրկած գու- մարներն:

Գ.Ա.ԶԻՐԷ, Մ.—Ձեր թերթը առաջին թիւէն սկսեալ զրկեցինք: » Ն.—Նոյնպէս:

կաթիւնը, որ տեղի պիտի ունենար Սնպա- Վին: Սակայն ամէն պարագայի մէջ ներկայ ամսոյ տեղի պիտի ունենայ բացում:

Այդ գծի մասին մեր ընթերցողաց քա- նի մը հետաքրքրական տեղեկութիւններ տալ արժան կը համարինք:

Առ այժմ գիծը պիտի մեկնի Քուպրի- էլ-Ամէ (Pont des Anglais)ին անգլի կողմը գանուող մաքսանոցէն. սոյն գիծը 4 զըլ- խաւոր կայարաններ պիտի ունենայ որք են՝ Մաքսանոցը, Կիզէ, Թալպիէ եւ Բուրգերը: Սակայն թրամվայի կառքերը այս կեդրոն- ներէն զատ պիտի կանգ առնեն Կենդանա- բանական պարտէզը, Կիզէի միւտիւրու- թեան կեդրոնատեղին, Միւղէի, եւ Կիզէի բանտին առջեւ, վերին Նոյնպոսի երկա- թուղոյ եւ թրամվայի գծին իրար կարած տեղը, Թալպիէի կամուրջին քով, Քօմ-էլ- էսօվէտի գիւղը եւ վերջապէս Բուրգերուն ստորտը. ասանցմէ դուրս ուրիշ տեղ կանգ չ'պիտի առնեն կառքերը ճամբարդ նստելու կամ իջնելու համար:

Արդ՝ քաղաքէն Բուրգերը երթալու համար ո՞ր է մէկը պիտի կրնայ Կիզէի մաքսանոցի կայարանէն նստիլ կամ Մըսըր Աթիէէն չողենաւով անցնիլ Կիզէ, որ տեղ կը գտնուի գծին երկրորդ կայարանը:

Սոյն գծի ելք քաղաքէն թրամվայները առաջին եւ երկրորդ կարգի ատմակներ պի- տի ունենան՝ կանանց համար առանձին բաժանումներով:

Ս Ա Կ Ա Գ Ի Ի Կ

Table with 3 columns: Station name, Distance (Ղըլ), and Direction (Ողջ). Includes stations like Մաքսանոցէն (octroi), Կիզէ, Թալպիէ, Բուրգերը, Մաքսանոց, Բուրգերը, Կիզէ, Բուրգերը, Մաքսանոց, Կիզէ, Բուրգերը, Մաքսանոց, Կիզէ, Թալպիէ.

Երթեւեկի տունակ չ'պիտի ըլլայ: Երկրորդ կարգի ատմակներուն գիւրը վերանշանակեալ գնոց կէտն է. անանկ որ մինչև Բուրգերը երթեւեկիլը պիտի արժէ առաջին կարգով 10՝ իսկ երկրորդով 5 զըլ- ողջ:

—Այսօր զարմանալեաց աշխարհի՛ Ա- մերիկայի մէջ՝ հրատարակուած հանդէսէ մը կը քաղենք հետեւեալը: «Հարիւրապետ Տրէյֆիւսի վերաքննութեան պարագանե- րէն հրէաներն համալրում գոյացնելով որ աշխարհի ամենազարգացեալ երկիրներուն մէջ իսկ գաւառական մեծ սխալներ կրնան տեղի ունենալ, ինչպէս 1894ին զինուորա- կան ատեանին առջև տեղի ունեցած Տրէյ- ֆիւս հարիւրապետին դատն, կը խորհին թէ ասկէ 2000 տարիի չափ առաջ Պիղա- սոսի առջև տեղի ունեցալ Քրիստոս Յի- սուսի դատավարութիւնն եւ Պիղատոսին տուած խաչի պատիժի վճիռն օրինաւոր ե- ղած չ'իին: Գաղղիոյ եւ Գերմանիոյ մէջ գըտ- նուած Հրէից մեծ խմբակ մը որոշեց վե- րաքննութեան ենթարկել Յիսուս Քրիստո- սի դէմ եղած մահու վճիռն:

Ահա զարմանալի խորհուրդ մը: Միայն թէ նախնական դատի մը վերաքննութեան գիւմելու համար վաթսուս օր պայմանաժամ սահմանուած ըլլալուն, արդեօք վերաքնն- նութեան ատենի նախագահը չի՞ պիտի մերժէ Հրէից սոյն խնդրագիրը, քանի որ գրեթէ 2000 տարիի չափ մեծ ժամանա- կամից մը անցած է այս վճիռէն յետոյ:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ի Գ Ա Շ Ի Ր Է

ՅԲԵՔ ԶԻՆՂԻ ԲԱԺՆՈՒԾ

ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԱԿՆՑ ԵՒ ՍԱՆԿԱՄԱՐՏԻՋԻ

Մանչերու դպրոցը կը գտնուի Անգղիացւոց վարժարանի շէնքին մէջ Ի Պապ-էլ-Պալատ:

Աղջկանց եւ Մանկապարտիզի համար զատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի Ի Հօշ-էլ-Շարքավի, Տալուտի:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի տրուի Անգղիերէնի:

Մանկապարտէզի համար պատրաստ է մասնագէտ եւ փորձառու վարժուհի մը եւ մանկապարտիզի վերջին մէթոտներով ու դրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Վարժարաններու բացումը տեղի պիտի ունենայ առաջիկայ Սեպտեմբեր Կին:

Մանրամասնութեանց համար դիմել, Տիար Հաճի Փիլիպպոս Եպսկոպեանի Ի Մէնչի:

4-15

ԾԻԾԱՂՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱՄՈՑ

Երկու ամուսինք ծովագերք:

—Սիրելի՛ս, այդ նուակը մի՛ նստիր. փորձանք մը չի հանես:

—Ձե՛, անուծի՛կս:

—Ա՛հ, դող կ'իջնի կոբ. նուակ գործածել չես գիտեր, եթէ խեղդուելու ըլլա՛ս . . . :

—Հոգ մի՛ բնեք, ես ըրածս գիտեմ:

—Գոնէ ժամացոյցդ ու շղթան ինձի ձգե՛ . . . :

Գիւղացի մը ազնուական սիկնոջ մը հետ կը խօսէր եւ անոր խորհուրդ կուտար, որ քանի նուս գործածէ:

Օրինակի համար, սիկի՛ն, խոզերուս ամեն օր քանի նուս կուտամ, եւ տեսնա՛մ քե՛ ի՛նչ աղւոր կետպարանք մը ունիմ եւ գեր եմ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ

Տայիբի Սանիթի Եփես դիմաց

Սմնարարները ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:

Գինեքը չափաւոր եւ աժան:

Փորձ մը միայն կը բաւէ: 3-24

ԱՍԻԱԿԱՆ ՀԱՑԻ ՓՈՒՌ

Շարա Մուհամեճ Ալի, Վիքտորիա դեղարանի դեմ Մանասքը փողոց թիւ 25

Մ. Թորոսեան, Կ. Բարուէական եւ Բնկ. կը յայտարարեն թէ, իրենց նոր բացած փուսին մէջ կը պատրաստուի անխարդախ ալիքէ ստիական թոնրի հաց եւ Լաւաօ:

Մարտողութիւնը անպայման կերպով դիւրացնող Ասիական այս պատրաստութիւնը շատ մը փափկաճաշակներու գոնուհակութեան արժանացած է:

Անվիճելի կերպով միակը եւ անմրցելին:

ՃԱՇԱԿԵՑԻՔ ԵՒ ՏԵՍԻՔ

5-8

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՐԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅԵՐՈՒ

ՅՕԵՕԿՐԱԾ

Գ.Ա.ՀԻՐԷ, — Մուսթի փողոց, — Գ.Ա.ՀԻՐԷ Ս. Եւ Ս. Սեհնավիի վաճառատան գիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնսօյի ընտիր անասակէ բանտիւլներու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ Եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանքային նախնոր տեսակներէն զարդեղներ, շղթաներ, օղի, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

8-50

ՏՕՐՔՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԻԵԱՆ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՒՈՅԺ

Ապսին, Շարե Բուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ախաններ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ախուսի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ախուսներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

10-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ

Օգտուն եւ յարմարաւոր տեղ մը լաւ կահաւորեալ արճարան մը կայ, որոյ տէրը մեկնման պատճառաւ կ'ուզէ ծախել:

Հաստատուն գործ մը ունենալ փափաքողներն, թող դիմեն Արշալոյսի խմբագրատունը, հարկ եղած մանրամասնութիւններուն տեղեկանալու համար:

2-3

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի Գ Ա Շ Ի Ր Է

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ր, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահադդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Ցանկեր, Գիրքեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կսկոնագրեր, Տոմար, Ընկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագոյնութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եգիպտոսի ո եւ է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պապար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւզէյինէն փոխադրած է Ի Պապար Մուրուր: Ֆրանսական նորածուութեանց յար եւ նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հետաքրքրեալ միջոցաւ ցարդ գոհ բրած է իրեն զիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնել:

Իրեն եղած յանձնարարութիւնը ո՛չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նազը) ազատ մնալ: 6-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րասաղգ) սեւ, շագանակագոյն եւ ուկեգոյն:

Սեւ ներկ չիչով վայրկենապէս սեւցնող Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զրշող (2 Ֆրանք):

Ճերմկցնող շուր չիչով, որը մարմնին բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եգիպտոսի մէջ միակը:

Ախուսի փոշի եւ շուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն սնձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափել եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք ըստ տպագրած նամակադրոյցները: 6-8

Le Gérant, Dr. A. S. HAGOPIAN